Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2023թ. ապրիլի 23-ից 25-ը Տաջիկստանի Հանրապետություն (ք. Դուշանբե) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

Հարություն Սեդրակյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Տաջիկստանի Հանրապետություն, ք. Դուշանբե, 2023թ. ապրիլի 23-ից 25-ը

4. **Հրավիրող կողմը.**

Ճանապարհաշինարարների միջկառավարական խորհուրդ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն Ճանապարհաշինարարների միջկառավարական խորհրդի կողմից կազմակերպված համաժողովին, ինչպես նաև ապրիլի 25-ին Դուշանբե քաղաքից մեկնարկող միջազգային ավտոարշավի մեկնարկման արարողությանը, որի վերջնակետը նախատեսված է, որ լինելու է Երևան քաղաքը:

6. **Քննարկված թեմաները.**

Համաժողովի ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները.

1. Տաջիկստանի տրանսպորտային համակարգի զարգացման ներկա վիճակն ու խնդիրները, մայրուղիների զարգացման հեռանկարները,
2. Միջազգային ավտոարշավների իրականացումը՝ որպես ճանապարհաշինարարների համագործակցության և գործընկերական հարաբերությունների ամրապնդման գործիք,
3. Նորարարական տեխնոլոգիական լուծումներ և նյութեր ԱՊՀ Կենտրոնական Ասիայի հատվածի ճանապարհաշինության ոլորտում,

4. Բետոնե ճանապարհների կառուցման էկոլոգիական-տեխնոլոգիական առանձնահատկությունները և դրանց պահպանումը,
5. Ճանապարհային ակտիվների կառավարման ծրագիրը,
6. Ճանապարհաշինության նորարարական նյութեր և տեխնոլոգիաներ ԱՊՀ պետությունների համար,
7. Ավտոմոբիլային ճանապարհների արհեստական կառույցների, ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և նորոգման նորարարական տեխնոլոգիաները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հանդիպումներ եմ ունեցել ավտոարշավի մասնակից Ռուսաստանի Դաշնության, Ուզբեկստանի Հանրապետության, Թուրքմենստանի Հանրապետության, Տաջիկստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության ճանապարհային ոլորտի ներկայացուցիչների հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի արդյունքներով փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է շարունակել աշխատանքները աշխատաժողովի ընթացքում վեր հանված ճանապարհաշինական ոլորտի զարգացման համար անհրաժեշտ ուղղություններով, մասնավորապես կիրառել համաժողովի ընթացքում ներկայացված նորարարական տեխնոլոգիաները:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

28.04.2023 թ.